«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-937-16.04.2021-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածը լրացնել նոր 3.1-ին մասով, համաձայն որի՝ օրենքով կարող են սահմանվել իրավասու մարմնի որոշմամբ գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցման այլ հիմքեր:

Որպես նախագծի հիմնավորում նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են տարբեր ոլորտներ և տարբեր գործառույթներ իրականացնող ՊՈԱԿ-ներ, որոնք իրենց ոլորտային առանձնահատկություններից ելնելով կարիք ունեն ավելի մասնագիտական և տվյալ ոլորտի համար առանցքային նշանակություն և կարևորություն ունեցող կարգավորումների, քան նախատեսված է օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչը հնարավորություն չի տալիս լիազոր մարմիններին՝ կախված ոլորտի առանձնահատկություններից, սահմանել տնօրենի լիազորությունների դադարեցման այլ հիմքեր:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործադիր մարմնի լիազորությունների դադարեցման հիմքերը կարող են սահմանվել միայն օրենքով:

Բացի դրանից, հարկ է նշել, որ ներկայացված նախագծի ընդունման նպատակահարմարության հարցին հնարավոր է անդրադառնալ միայն գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցման այն հստակ հիմքի առկայության դեպքում, որը նախատեսված չէ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում և որի առկայության անհրաժեշտությունն առաջացել է գործնականում: Ուստի գտնում ենք, որ նախագծով առաջարկվող կարգավորումը կարող է կարգավորիչ նշանակություն ունենալ միայն համապատասխան ոլորտային օրենքում պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի լիազորությունների դադարեցման կոնկրետ հիմք նախատեսելու պարագայում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ օրենքի նախագիծն այս տեսքով ընդունելի չէ և ունի լրամշակման կարիք: